

**ՄԱՌԻՆԱՍԻ ՏՈՄԱՐԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՅՆԵՐԵՆ ՔԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ
ՌԱՅԻՎ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Հայկական միջնադարյան գրչագիր ձևագրերը պահպանել են ուշագրավ տեղեկություններ Ճեզրեասի տոմարի մասին: Անգրեասի 200-ամյա տոմար-տոնացույցին նվիրված աշխատությունը թարգմանվել է ասորերենից՝ հայերեն, սակայն ամբողջական վիճակում չի պահպանվել: Նրա աշխատության ասորերեն բնագիրը հայտնի չէ²: Մեր ուսումնասիրություններից պարզվել է, որ Անանիա Շիրակացին զատկին նվիրված մեկնության մեջ օգտվել է Անգրեասի աշխատության հայերեն թարգմանություններից: Առկա ընդարձակ բնագիրը մաշտոցյան Մատենադարանի³ 1973 թվահամարի ձևագրում (1342 թ.) կրում է Անգրեասայ մեծի վասն որոյ պատեքի յետ և յառաջ խաղալոյ և վասն դրութեան երկերիւրեկինս վերտառութիւնը: Անգրեասի բնագրի թարգմանության համառոտամ է խմբագրած օրինակը ՄՄ 1999 թվահամարի ձևագրում (1126 թ.) ունի լեռնոք Անգրէասի իմաստասերի վասն զատկայա անվանումը:

Բնագրի ներքոհիշյալ հատվածը, ինչպես նշել են ուսումնասիրողները, հնարավորություն է տալիս թվագրելու Անգրեասի 200-ամյա տոնացույցի ասորերենից հայերեն թարգմանելու ժամանակը: Ահա բնագիրը՝

«[Արդ՝ սկիզբն] հասարակելոյ տուրնընան և գիշերոյ ըստ թուոյ նգիպտացուցն ի Խ և ի Դ (24) ամսոյն լինի, որ անուանեալ կոչի պեմենովթ, որ զայ կշռի ըստ թուոյ Անտիսեացուց ի Խ և որոցում (20) դիւստրոս ամսոյն, այսինքն՝ ի մեհեկանի, և քանզի Քրիստոս ի ԴԺ աներորդում (14) աւուր ամսոյն առաջնոյ (== նիսան) շարաբեցաւ, յայտ է՝ յետ հասարակելոյ տուրնընան և գիշերոյ [յ]արեգ (== նիսան) ամսեան, և այս ոչ վրիպեալ է ի մէջ, քեւ այժմ ի մեր ամս ն աւուրս յաւեգ ամիս են (ընդգծումը մերն է— Ռ. Վ.), բազում անգամ արարին հրէայք զատկինս⁴:

Համառոտակի ներկայացնենք Աշ. Աբրահամյանի և է. Աղայանի կարծիքները: Աշ. Աբրահամյանն առաջին անգամ հրատարակել է Անգրեասի զատկի մեկնությունը Անգրեասի տոմարագրական աշխատությունները վերտառությամբ հոգվածում: Այնտեղ նա աղբյուրագրական-տեքստաբանական այլ հարցերի հետ միասին անդրադարձել է նաև Անգրեասի բնագրի թարգմանության ժամանակի խնդրին⁵: Անգրեասի 200-ամյա տոնացույցի թարգմանության ժամանակը որոշելու համար Աշ. Աբրահամյանը հիմք է ընդունել զարեանային գիշերահամարի օրը (= մարտի 20) և հայկական մեհեկան ամիսը (24-ից 30-ը)⁶ և հանգել այն հետևություն, թե

¹ Л. А. Тер-Петросян, Сиро-армянские литературные связи в IV—V вв., (Автореферат диссертации на соискание ученой степени доктора филологических наук), Л., 1986, с. 17.

² Ասորական սկզբնագրություններից հայտնի է միայն նգիա՝ Մթբնացու վկայությունները Անգրեասի և նրա աշխատությունների մասին (տե՛ս V. Grumel, La Chronologie, Paris, 1958, p. 98—108):

³ Այսուհետե՝ ՄՄ:

⁴ է. Աղայան, Անգրեաս Բյուզանդացու երկուհարյուրամյա տոնացույցը և նրա հայերեն թարգմանությունը («Բանբեր Երևանի համալսարանի», 1979, № 2, էջ 135), Աշ. Աբրահամյան, Անգրեասի տոմարագրական աշխատությունները («Բնագրատության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում», հ. 6, Երևան, 1967, էջ 78):

⁵ Աշ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 72—74:

⁶ Եթե ընդունենք, որ 353—356 թթ. նավասարդի 1-ը համարվեն է եղել օգոստոսի 29-ին, ապա մեհեկանի 24-ը զուգահեռվել է մարտի 20-ին: Իսկ եթե ընդունենք, որ նավասարդի 1-ը համապատասխանել է օգոստոսի 30-ին, ապա մեհեկանի 23-ը համարվեն է մարտի 20-ին: 552 թ. նավասարդի 1 = հուլիսի 11 համապատասխանությունը ցույց է տալիս, որ 353 թ. նավասարդի 1-ը՝ համարվեն է օգոստոսի 30-ին: Թումանյանը գտնում է, որ օգոստոսի 29-ը 30 է դառնում այն պատճառով, որ հուլյան տոմարում 4-րդ տարվա մեջ է նահանջ լինում, իսկ եգիպտականում՝

թարգմանությունը կատարվել է մինչև 381 թվականը (մյուս հոդվածներում՝ 383 թ.)⁷։ Առաջին հոդվածում նկատի ունենալով տրեզ ամսի հիշատակությունը, նա չի բացառել նաև V դարի սկզբում այն թարգմանած լինելու հանգամանքը։ Այն. Աբրահամյանը հետազայում հրաժարվել է իր վերոհիշյալ վարկածից և ընտրել միայն մեհեկանով թվագրելը, այսինքն՝ մինչև 383 թվականը։

Հարկ է նշել, որ Անգրեասի թարգմանիչը բնագրի նույն հատվածում՝ բացի մեհեկան։ շմասնունից հիշատակել է նաև նրան հաջորդող ամսի՝ արեգի անդունդը, Հայտնի փաստ է, որ զարնանային գիշերահավասարը արեգ ամսին (1-ից 30-ը) եղել է 384—387 թթ. սկսած մինչև 500—503 թթ.։ Գարնանային օրահավասարի համար հայոց մեհեկան և արեգ իրար հաջորդող ամիսների հիշատակությունը բացառում է բնագրի թարգմանությունը մեհեկանով թվագրելը։ Ի դեպ թարգմանիչը զարնանային օրահավասարն ընդունել է հայկական մեհեկան և արեգ ամիսներին։ Հասկանալի է, որ զարնանային գիշերահավասարը մեհեկանին եղել է Անգրեասի 200-ամյա աղյուսակի առաջին 32 տարում, իսկ հետագա 120 տարում՝ արեգին, վերջապես վերջին 48 տարում՝ ահեկանին։ Այսպիսով՝ պարզ է դառնում, որ եթե առաջներում (353—353 թթ.) զարնանային գիշերահավասարը համընկնում էր մեհեկան ամսին (23-ից 30-ը), ապա թարգմանչի ապրած ժամանակ թե՛ զարնանային օրահավասարը (= մարտի 20), թե՛ Քրիստոսի շարժարանի օրը, այն է՝ առաջին լուսնի լրման օրը (= նիսանի 14 = ապրիլի 4) և փաստորեն լուսնի 19-ամյա պարբերաշրջանի առաջին տարին լինում էն արեգ ամսին։

Դժբախտաբար Այ. Աբրահամյանը չի նկատել թարգմանության տարին հավաստող այսպիսի պահանջ՝ կարեոր և ըստ էության միակ փաստը, որն առկա է վերոհիշյալ հատվածում։

Անգրեասի բնագրի հրատարակման և ուսումնասիրման գործում աղբյուրագիտական և տեքստաբանական արժեքավոր դիտողություններ ունի է. Աղայանը։ Նա նույնպես անգրադարձել է Անգրեասի 200-ամյա տոնացույցի թարգմանության ժամանակին⁸։ է. Աղայանն իրավացիորեն հիմք է ընդունել թարգմանչի այն հաղորդումը, թե զարնանային գիշերահավասարի օրը և Քրիստոսի շարժարանաց օրը լինում են արեգ ամսին։ Սակայն նա հիմնվել է բնագրի մի հատվածի վրա, որտեղ առաջին ամսվա ոկիզբը, այսինքն՝ նիսանի 1-ը, փաստագրվել է մարտի 19-ը, որը՝ զրնական սխալ է և չի հիմնավորվում հայկական տոմարական սկզբնաղբյուրներով։ Բացի այդ է. Աղայանը Քրիստոսի շարժարանաց օրը համարել է ապրիլի 1-ը, որը նույնպես ընդունելի չէ, քանի որ բնագրում փաստագրվել է 19-ամյա պարբերաշրջանի առաջին տարվա լուսնի լրման օրը (= նիսանի 14 = ապրիլի 4), որը հայտնի է հայկական տոմարական բնագրերից։ Դժբախտաբար է. Աղայանը ևս ուշադրության չի առել այն, որ բնագրում հատուկ ընդգծվում է լուսնի 19-ամյա պարբերաշրջանի առաջին տարին, որով որոշվում է թարգմանության տարին։ է. Աղայանի հաշված 421 (կամ 440) թվականը չի կարող թարգմանության տարին լինել, որովհետև այն Անգրեասի լուսնի 19-ամյակի 12-րդ տարին է, երբ լուսնի լրումը ապրիլի 2-ին (= նիսանի 12-ին) էր։

Առկա բնագրերի ու հայ տոմարագետների, հատկապես Անանիա Շիրակացու և Հովհաննես Իմաստասերի աշխատությունների օգնությամբ փորձենք հասկանալ և տեսնել, թե նրանք ինչ-

3-րդ (տե՛ս Բ. Մ ու մ ա ն յ ա ն, Հայ աստղագիտության պատմությունից, Երևան, 1985, էջ 119)։ Սակայն հայկական շարժական տոմարը նահանջ շուններ և եղիպտական խմբին չէր պատկանում, ուստի վերոհիշյալ զուգագիպությունը պատահական է նույնիսկ այն պարագայում, եթե 353—356 թթ. նավասարդի 1-ը համարվեց լինել օգոստոսի 29-ին։ Մանավանդ հեղինակը տարեկան ընդունել է մարտի 22-ը և ոչ օգոստոսի 29-ը, ինչպես ենթադրվել է մինչև այժմ։

7 Այ. Աբրահամյան, Հայոց գիր և գրություն, Երևան, 1973, էջ 102—104, ն ու յ ն ի՝ Աղբյուրագիտական վիճելի մի քանի հարցերի մասին («Պատմա-բանասիրական հանգես», 1976, № 2, էջ 175), ն ու յ ն ի՝ Անգրեաս Բյուզանդացու տոնացույցի թարգմանության ժամանակը («Պատմա-բանասիրական հանգես», 1980, № 2, էջ 179—189)։

8 է. Բ. Աղայան, Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության մեդիսպյան ալբուբենի և հարակից հարցերի մասին, Երևան, 1977, էջ 126—145, ն ու յ ն ի՝ Անգրեաս Բյուզանդացու երկուհարյուրամյա տոնացույցը... ն ու յ ն ի՝ Անգրեասի երկուհարյուրամյա դատկացույցի թարգմանության ժամանակի մասին («Պատմա-բանասիրական հանգես», 1980, № 2, էջ 190—198), ն ու յ ն ի՝ Հայոց բուն. թվականի ոկիզբը և հայկական շրջանները (ՀՍՍՀ ԳԱ Վերաբեր հասարակական գիտություններ, 1983, № 11, էջ 16), ն ու յ ն ի՝ Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Երևան, 1986, էջ 93—150։

պես են բացատրել տոմարական մի քանի հարցեր, որոնց վրա էլ հիմնականում հիմնված է 200-ամյա պարբերաշրջանի թարգմանության ժամանակի որոշումը:

Անդրեասը իր 200-ամյա տոմար-տոնացույցի մասին գրել է զատկի մեկնության մեջ. «...վասն այսորիկ երկերիւր ամի միանգամայն համարեցայ ըստ թուոյն Անտիոքացւոց ի չորեքհարիւրորդէ առաջներորդէ ամէն մինչև յամն վեցհարիւրորդ այնոցիկ, որ կացցեն յաշխարհի, կազմեցի ես՝ Անդրէաս, եղբայր Մագնոսի եպիսկոպոսի, և դրոշմեցի առանձինն զքնաւ զմի մի ամ երկերիւրն ամի, յեւթն և ի Ժ (17) կանոն, որովք զամենայն համարն բովանդակեցի յերկերիւր կարգ և զզատիկն մեկնեցի զմի մի կարգս առ մի մի տալիս»:

Արդ՝ տեսնենք, թե այս հաղորդումը ինչպես են ընկալել հայ տոմարագետները և մատենագիրները: Ըստ՝ Երրակացու և Իմաստասերի զուգահեռ վկայությունների, Անդրեասի 200-ամյա տոնացույցը ավարտվել է նոյանի 4-ի (=մարտի 25) լուսնի լրումով¹⁰: Անդրեասի տոմարի մասին Հովհաննես Իմաստասերի աշխատություններում գտնում ենք նաև հետևյալ վկայությունները.

1. «Եւ է սկիզբն երկուհարիւրեկին (Անդրեասի— Ռ. Վ.) ի շորից ապրիլի շորեքտասներորդն լուսնոյ զատկաց. և վախճան, յետ տաս ինն և տասներկաց ն տասանց ամաց»¹¹:

2. «Բայց երկուհարիւրեակն ի շորից անտի ապրիլիտ ամսոյ սկսանի և առնու վախճան ի մարտիս ամսոյ ի քսան և հինգին. տասն անգամ կատարեալ զբոլորն, և տաս ևս այլ ի վերայ ամս»¹²:

Հովհաննես Սարկավագի տեղեկություններից պարզվում է, որ Անդրեասի տոնացույցը կազմվել է $19 \times 10 + 10$ (կամ $19 \times 5 + 19 \times 5 + 10$) տարուց, որը սկսվել է 19-ամյակի առաջին տարով, երբ լուսնի լրումը ապրիլի 4-ին էր և ավարտվել 10-րդ տարով, երբ լուսնի լրումը մարտի 25-ին էր:

Հայկական թվականի սկզբի կապակցությամբ 200-ամյա տոնացույցի մասին Սամվել Անեցու մոտ կարդում ենք. «Աստանոր լցեալ լինի ամբ ի ծննդենէն Քրիստոսի ՇԾԳ յորում և բովանդակեցան կանոնք Մ-եկին Անդրիասայ, զորոյ զկնի կարգեցաւ թուական Հայոց. այսպիսի պատճառաւ. ի լրմանն Մ. եկին, լրումն զատկին, ի մարտի Ին էր: Եւ ի սկզբանն՝ յապրիլ Դ»¹³: Այս հաղորդման մեջ Սամվել Անեցին փաստորեն կրկնել է Անանիա Երրակացուն և Հովհաննես Իմաստասերին, միայն լրացուցիչ հայտնելով Անդրեասի 200-ամյա տոնացույցի վերջին տարին, այն է 553-ը՝ քրիստոնեական հայկական թվականով: Ժամանակին Անանիա Երրակացուն, Հովհաննես Իմաստասերին, հատկապես Սամվել Անեցուն կրկնել են Կիրակոս Գանձակեցին, Ստեփանոս Օրբելյանը, Հակոբ Ղրիմեցին և այլ հեղինակներ¹⁴:

Անդրեասի տոմարի առաջին տարվա համար 1342 թ. գրված ՄՄ 1973 թվահամարի ձեռագրում ասվում է. «... և սկիզբն իրողութենէն այսմիկ ՅՄԴ ամն զալստեան Տեառն մերոյ [] Յիսուսի Քրիստոսի և ՆԱ երորդ ամն շինածոյ Անդիոք քաղաքի և Դիոկղիտանոսի ԿԹ ամ և Կիրոս քաղաքի ՈԿԴ ամ և ի [Ժ] 15 Զերորդ հիմատոջ Կոստանդնի ոգոստին որդոյ Կոստանդին եւ ի ԱԺ-ին դիւթոնին յետ զնահանջսն կարգելոյ [] յորս դիպի ԺԴ երորդն լուսնի սուրբ զատկին ապրիլի [] Դ...»¹⁵: Հիշյալ թվերը աղյուսակի մեջ ունեն հետևյալ տեսքը (աղ. 1):

9 է. Աղ ա յ ա ն, Անդրեաս Թյուզանդացու երկուհարյուրամյա տոնացույցը..., էջ 133, Ա 2. Ա բ ա հ ա մ յ ա ն, Անդրեասի տոմարագիտական աշխատությունները, էջ 80:

10 Ա Ղ. Ա բ ա հ ա մ յ ա ն, Անանիա Երրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 299 (այսուհետև՝ «Անանիա Երրակացու մատենագրությունը»), ն ու յ ն ի՝ Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 275 (այսուհետև՝ «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը»):

* Բնագրում՝ ամսոց, որը զրկական սխալ է:

11 «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», էջ 246:

12 Նույն տեղում, էջ 247:

13 «Ս ա մ ո ի է լ ի ք ա հ ա ն ա յ ի Ա ն ե ճ ո յ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1898, էջ 74:

14 Կ ի բ ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ճ ի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 41—42, «Ս տ ե փ ա ն ն ո ս ի Մ իւ ն ե ա ջ եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», Մոսկվա, 1861, էջ 69—70, ՄՄ, ձեռ. № 1114, էջ 90 ր: 90ա—բ:

15 Ուղղումը՝ Ա 2. Ա բ ա հ ա մ յ ա ն ի:

16 ՄՄ, ձեռ. № 1973, էջ 251ա:

Աղյուսակում բերված համաժամանակյա թվականներով Անգրեաթի տոնացույցի առաջին տարածքային է 353 թվականին, լուսնի լրումը հղել է ապրիլի 4-ին, իսկ զատիկը՝ ապրիլի 11-ին¹⁷։ 353 թվականին լուսնի լրումը փաստագրվել է նաև Վ. Գրյունիցի ժամանակագրության զետեղման աղյուսակում¹⁸։ Անգրեաթի տոնացույցի վերջին տարին Անտիոքի Հիմնադրման թվականաթյան 600-րդ տարին է, որը կրկին բաժանելով 19-ի, ստանում ենք 11 մնացորդ, որից հանելով մեկ միավոր՝ Անտիոքյան 19-ամյակի 10-րդ տարին։ Այն համարժեք է Անգրեաթի 19-ամյակի 10-րդ տարուն, երբ լուսնի լրումը մարտի 25-ին էր։ Պարզ է դառնում, որ Անգրեաթը Անտիոքի Հիմնադրման թվականը պատահական չի օգտագործել 200-ամյակի մեջ։

Աղյուսակ 1

Ջուլիանյան թվականներ	Թվերից առաջված մնացորդները	19-ամյակի հաշվառված լուսնի լրումը	19-ամյակի 1-ին տարվա լուսնի լրումը
1	2	3	4
354 (բրիտանական հաշվառման թվական)	12 ($-1-1=-2$)	A 4*	A 13
401 (Անտիոքի հիմնադրման թվական)	8 (-1)	A 4	A 4
80 (Գիսկետախանի էրա)	10	A 4	A 6 (A5)
Կոստանդնու 16-րդ տարին=353 թ.	11 (-1)	A 4	A 13
664 (Կիրոսի հիմնադրման թվական)	18 ($+3$)=1	A 4	A 4
11-րդ ինդիկտիոն	11	A 4	—
353 (բրիտանական գիսնիսյան թվական)	11 (-1)	A 4	A 13

Անգրեաթի տոնացույցի վերջին տարին, բրիտանական հաշվական թվականով, Յամվել Անեցիի փաստագրել է 553-ը։ Այն բաժանելով 19-ի, ստանում ենք երկու մնացորդ, որից մի կազմից հանելով մեկ հավելադիր տարին, մյուս կողմից (19-ամյակի տարին ստանալու համար)՝ ես մեկ թիվ, և լուսնի լրումը կլինի մարտի 25-ին՝ հայկական և հռոմեական 19-ամյակի 19-րդ տարում։ Վերահիշյալ երկու թվերն էլ համարժեք են բրիտանական գիսնիսյան թվականի 552 տարուն, որտեղ ես 19-ամյակի համապատասխան տարին ստանալու համար բաժանում ենք 19-ի և հանում մեկ միավոր, և լուսնի լրումը գալիս է մարտի 25-ը¹⁹։

Այսպիսով՝ ակնհայտ է, որ Անգրեաթի 200-ամյա տոնացույցը օգտվել է 353-ին և ավարտվել 552 թվականին։ Նրա 19-ամյակի լուսնի լրման առաջին տարին հղել է ապրիլի 4-ը ($-$ նիսանի 14), 10-րդ տարին՝ մարտի 25-ը ($-$ նիսանի 4)։

Անգրեաթի 200-ամյա տոմար-տոնացույցը շօտագործվեց հետագայում շարունակաբար, որովհետև թերություններ ուներ։ Այդ մասին վկայութուններ է թողել Անանիա Շիրակացին։ Նա գրել է. «Այս ի սղառել Անգրեաթեան տոմարին ամացն երկերիւրց յաւուրս Յուստինուսի թագաւորի, եղև բազում խնդիր հմտագոյն իմաստադիրաց՝ վասն ոչ բերելոյ ճշգրտիւ զ'արդ իննետասն բաւրաւին, որ իննտուն և հինգ ամով բովանդակէր զեղանակ շրջադալութեան. նոյն յալովից թուցաւ գծախին, զի բազում ամաւր ըստ աւուրց բոլորակին շտուդէր զկնի բեռիբիստունն...»։

Անգրեաթի տոմարը, ինչպես տեսանք, հիմնվել է լուսնի 19-ամյա պարբերաշրջանի վրա։ Նրա

¹⁷ V. Grumel, նշվ. աշխ., էջ 240—244.

¹⁸ Նույն աղբյուր։

* A-ն ապրիլն է, իսկ թիվը՝ որը։

¹⁹ Բ. Վառդանյան, Անանիա Շիրակացու հիշատակարանների մեկնություն, շուրջն է մի քանի տոմարական—ժամանակագրական հարցեր («Պատմա-բանասիրական հանգես», 1987, № 1)։

մոտ այդ շրջանը հայտնի է շարեքտաներորդն լուսնի՝ կամ պարզապես շարեքտաներորդն անվանումներով: Բերենք որոշ վկայություններ²⁰:

1. «Ձի թէ դիպեցի Դժ-աններորդն ի շարաթուն, յառաջագոյն պահէ յերկուշարաթոյն մինչև ի շարաթն և ունի կարգ կատարեալ:»

2. «Եւ վասն այսորիկ յորում տուար դիպեցի շարեքտաներորդն լուսնի, եթէ կիրակի՝ դիպեցի միւս շարաթ անցանէ, և եթէ երկշարաթոշ դիպեցի, պահէ շարաթն ողջուն, դի երթիցէ հասցի և լցցէ զխորհուրդն և ի շարաթու շարշարանացն պահեցցէ, վասն այսորիկ իսկ և պատգալոյի, որ թարգմանի շարշարանք փրկչին մերոյ:»

Բարեբախտաբար Անգրեհասի և Շիրակացու ընդհանրում փաստագրվել է շարեքտաներորդի, այսինքն՝ լուսնի 19-ամյա պարբերաշրջանի առաջին տարվա մասին: Դիմենք վկայություններին²¹:

Անգրեհաս

1. «Փանդի բազումք յասորուց աներկիւղ յամառութեամբ կարծեցին, եթէ յԹ-աններորդում ամսեան պարտ իցէ աննել զզատիկն բաղարչակերաց, զոր Աստուած կանխով ի ձեռն Մովսէսի պատուիրեաց որդուցն Իսրայելի, որպէս և դրեալ է, թե՛ ասաց Տէր ցՄովսէս և ցԱնուրոն յերկրին ծոփալուցաց. Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսաց. առաջին լիցի ձեզ ամենայն ամսաց տարւոյն: Առաջիկ յամենայն ժողովորդի որդուցն Իսրայելի Ի ժ երորդում տուար յամենեան յամսիկ առցեն իւրաքանչիւր զսուն ըստ երգ և եղիցի պանել զգուշացեալ նոցա մինչև ի տասն և շուրջող [տուր] ամսայն, քանզի և յայնմ աւուր փրկեցան ազգն և ցեղք նոցա՝ նշանակեալ արեամբն ի վերայ սեմոց դրանց նոցա՝ ի հնազանդութիւն և ի ժառանգութիւնն փարաւունքի:»

2. «... և քանզի Փրիստոս ի Դժ-աններորդում աւուր ամսոյն առաջնայ (==նիսան) շարաբեցաւ յայտ է՝ յետ հասարակելոյ տուրնշեան և զիշերոյ [յ]արեզ (==նիսան) ամսեան...»

Անգրեհասի, ինչպես և Շիրակացու հիշյալ ընդհանրում շարեքտաներորդի լուսնի ամսով՝ ընկալել են լուսնի 19-ամյա պարբերաշրջանը, իսկ այդ ցիկլի առաջին տարին՝ նիսանի 14-ր (ապրիլի 4-ը): Այդ են վկայում նաև Շիրակացու և Իմաստասերի համարժեք տեղեկությունները²²:

Շիրակացի

1. «...ի շորորդ աւուրն ապրեղի ծո շորեքտասան լուսնի. և կարգեաց զնա զլուիս բուրի. վասն զի ի նմին աւուր հանդիպի ըստ երբայեցուց շորեքտասան նիսան լուսն և անվերադրութիւն:»

20 է. Աղ ա յ ա ն, Անգրեհաս Բյուզանդացու երկուհարյուրամյա տոնացույցը..., էջ 137, 138—139, Ա շ. Աբրահամյան, Անգրեհասի տոմարագիտական աշխատությունները, էջ 79, 80—81:

21 է. Աղ ա յ ա ն, Անգրեհաս Բյուզանդացու երկուհարյուրամյա տոնացույցը..., էջ 134, «Անանիա Շիրակացու մատենագրությունը», էջ 292, Ա շ. Աբրահամյան, Անգրեհասի տոմարագիտական աշխատությունները, էջ 75—76:

22 «Անանիա Շիրակացու մատենագրությունը», էջ 295, 294, «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», էջ 272, 271:

Շիրակացի

«Ձտան որոյ զատկիս ուսաք ի Մովսէսէ և յելիցն Իսրայելի յնդիպտուէ, քանզի դրեալ է այսպէս. Խաւտեցաւ Տէր ինդ Մովսէսի և ընդ Անուրովն յերկրին եղիպագաց և ասէ. Ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսաց, առաջին եղիցի ձեզ յամիսս տարւոյ: Եւ յառաջ մտաւցեալ ասէ. Ի տասներորդում տուար ամսեան տայսորիկ առցեն իւրաքանչիւր ոչխար ըստ տունս, ապա թե ոչ ըստ տանց տոհմից յաղագս աղքատութեան հանկանակեալ. Եւ զինովմար ածեալ ասէ. «Եւ եղիցի պանել մինչև զտասն և շուրս տուր ամսայն տայսորիկ. և վնցեն ընդ երկուս և շաղախեցեն զբարաւորն. և զերկուսեան սեման յարենէն, որ եղև պահպանական անդրանկացն առի սատանելն:»

Իմաստասեր

«...ի շորս ապրիլի եղ շորեքտասան լուսնի և կարգեաց զնա զլուիս բուրին, վասն զի ի նմին աւուր հանդիպի շորեքտասան նիսանայ լուսն և անվերադրութիւն:»

Հովհաննես Սարկավազից հասել են նաև հետևյալ տեղեկությունները²³։

1. «Են՝ որ ասեն ի շորս ապրիելի, որ է նիսան շորեքտասան»։

2. «Են՝ էր լուսն լուսնոյ զատկաց շորորդն ապրիելի, որ է շորեքտասան նիսան ամսոյ»։ Այսպիսով՝ կասկածից վեր է, որ երբայական նիսան ամսի 14-ը համարվեց է հուլյան տոմարի ապրիլի 4-ին։ Այն լուսն օր է ընդունվել և լուսնի 19-ամյա պարբերաշրջանի առաջին տարի։

«Չորեքտասանորդի» կամ «շորեքտասանորդի» լուսնի, այսինքն՝ լուսնի 19-ամյա շրջանի ետ և առաջ շարժվելու օրինաչափությունների մասին կան տեղեկություններ Անդրեասի զատկի մեկնության մեջ։ Բնագրի ընդարձակ և համառոտ խմբագրությունների մեջ²⁴ փաստագրվել են հետևյալ համարվեց հատվածները։

Ընդարձակ խմբագրություն

«Արդ՝ եկեղեցի Քրիստոսի, յորժամ դիպեցի ԴԺ-աներորդ լուսնոյ յԺԹ-երորդէն մարտի ամսոյ և անդին ի մոտս կատարեցին ԲԺ-ան ամսեայ թիւքն լուսնոյն, միւս եւ ամիս յաւելումք ի վերայ ԲԺ-ան ամսոյն, որ անուանեալ կոչի նահանջեալ, զի այն ամք, քանզի պակաս գտանին թիւք ընթացից լուսնոյ քան զթիւք ընթացից արեգականն, այսպէս կազմեցաւ, զի նահանջեալ ամսաւք լիցի, որպէս զի երթիցէ հասցէ թիւք ընթացից լուսնոյ թուոյ ընթացից արեգականն...»։

Բերենք Շիրակացու և Իմաստասերի համարվեց վկայությունները²⁵, ըաղված Անդրեասի բնագրից։

Շիրակացի

«Արդ քանզի տույութիւն եկեղեցւոյ ուսուցանէ պահել ամի ամի զար Բաղարշակեացն, եւ յորժամ դիպի շորեքտասան լուսնի ի շորս աւելեացն մինչեւ ի քսան եւ ութերորդն [նիսանայ], այսինքն է՝ ապրիլի [ութ և տասն] պահեմք եւ առնեմք զատիկ։ Իսկ եթէ շորս աւելեացն է, անդէն յադարս ամիս կոյս կատարիցի երկոտասան թիւք լուսնոյ, միւս եւս այդ ամիս յաւելումք ի վերայ երկոտասան ամսոյն, որ անուանեալ կոչի նահանջեալ, զի յայն ամս քանզի պակաս գտանին թիւք ընթացից լուսնի քան զթիւս արեգական, այս այսպէս կազմեցաւ, զի նահանջեալ ամսաւք լիցի, որպէսզի երթիցէ հասցէ թիւք ընթացից լուսնոյ, թուոյ ընթացից արեգական...»։

²³ Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 225, 253։

²⁴ Է. Աղայան, Անդրեաս Բյուզանդացու երկուհարյուրամյա տոնացույցը..., էջ 135—136, Ա. Բ. Բաբայան, Անդրեասի տոմարագիտական աշխատությունները, էջ 78, Մ. Չեռ. Մ 1999, էջ 18ա։

²⁵ «Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 239, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 275»։

Համառոտ խմբագրություն

«Արդ՝ եկեղեցի Քրիստոսի, յորժամ դիպի շորեք Ժ-ան լուսնին, որ է մարտի ԺԹ մինչև ի Ժէ ապրիլի, այսինքն արեգի»։

Իմաստասեր

Արդ՝ յորժամ դիպի շորեքտասան լուսնի ի շորս աւելացն մինչև ի ԻԸ (28) նիսանայ, այսինքն ապրիլի ութ և տասն (18) պահեմք և առնեմք զատիկն, իսկ եթէ Դ(4) աւելեացն և անդէն յադարս ամիս կոյս (տպագրի մեջ՝ յադարասիս, իսկոյն) կատարեցին երկոտասան ամսեայ, որ անուանեալ կոչի նահանջեալ, քանզի յայն ամք պակաս գտանին ընթացս լուսնի քանզի շիւք ընթացիցն արեգական։

Անդրեասի բնագրի ընդարձակ խմբագրությունից պարզ է դառնում, որ շնորհաշատներորդի, այսինքն՝ լուսնի 19-ամյակի այն տարիներին, երբ անհրաժեշտ է եղել տարվա վերջից, այն է՝ մարտի 19-ից 12-րդ լուսնի վրա ավելացնել շնահանգնալու ամիսը, այսինքն՝ դարձրել են երեքտասներորդ լուսնի տարի, որպեսզի մի կողմից լուսնային տարվա օրերի քանակը հավասարվի արեգակնային օրերի քանակին, մյուս կողմից մեկ տարում երկու զատիկ չլինի։ Այդ երեւում է նաև Շիրակացու և Խմառասների բնագրերից։ Ըստ այդմ լուսնի 19-ամյակի այն տարիներին, երբ լուսնի լրումը լինում էր մարտի 20-ից հետո մինչև ապրիլի 18-ը, այսինքն՝ առաջին տարուց հաշված A 4-ին, M՝ 24-ին, A 1-ին, M 21-ին, M 29-ին, A 6-ին, M 25-ին, A 2-ին, M 22-ին, M 30-ին, A 18-ին և M 27-ին, այն է 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 15-րդ, 16-րդ և 18-րդ տարիներին, երբ եղել է երկուտասներորդ լուսնի։ Ինչպես և՛ լուսնի 19-ամյակի 3-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ, 14-րդ, 17-րդ և 19-րդ տարիներին տարվա վերջից ավելացրել են շնահանգնալու ամիսը։ Այնուհետև այդ լրումներից սկսած, նայած շաբաթվա ինչ օր է ընկել, պահել և կատարել են զատիկը։

Լուսնի 19-ամյա պարբերաշրջանի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ այդ շրջանի 12 տարին համարել են երկուտասներորդ լուսնի, իսկ 7 տարին՝ շնահանգնալու, այսինքն՝ երեքտասներորդ լուսնի։ Այդ յոթ տարիներում տարվա վերջից, այն է՝ մարտի 19-ից (ըստ Անդրեասի) կամ մարտի 20-ից (ըստ Շիրակացու), երբ արեգակը սկսում էր իր ցիկլային շարժումը նույն համաստեղությունից, լրացուցիչ ավելացրել են լուսնի պակաս օրերը։ Հուլյան տոմարով արված լուսնի 19-ամյակի հետազոտությունից երևում է, որ զարնանային օրհավասարից (մարտի 20-ից) հետո, երբ լուսնի ծնունդը (1-ին տարուց A 4-ից սկսած) լինում էր M 27-ին, M 24-ին, M 31-ին, M 27-ին, M 25-ին, M 22-ին և M 29-ին, ավելացվում էր շնահանգնալու ամիսը, այսինքն՝ 13-րդ լուսնի էր, իսկ երբ լուսնի լրումը կատարվում էր զարնանային օրհավասարից (մարտի 20-ից) առաջ՝ M 12-ին, M 9-ին, M 16-ին, M 13-ին, M 10-ին, M 7-ին, M 14-ին, այսինքն՝ 3-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ, 14-րդ, 17-րդ և 19-րդ տարիներին, շնահանգնալու ամիսը՝ 13-րդ լուսնի, ավելացնում էին տարվա վերջից։

Այն տոմարական համակարգերում և տոմարագետ հեղինակների մոտ, եթե առաջին տարին չէր դրվում A 4-ին, այլ A 6 (A 5)-ին, A 13-ին, A 2-ին և այլն, ապա համապատասխանորեն փոխվում էին տարիների հաջորդականությունը և երեք (մասամբ 2) տարիների ցիկլային կրկնությունը, սակայն ոչ՝ 19-ամյակի տարիները։ Լուսնի 19-ամյա պարբերաշրջանում, մշտապես նույն 12 տարում, լինում էր երկուտասն լուսնի, իսկ նույն 7 տարում՝ երեքտասն։ Թե ի՞նչ ցիկլային (եւ ու առաջ շարժվելու) փոփոխություններ են կատարվել 12 և 7 տարիներում լուսնի 19-ամյակի մեջ, վերահիշյալ բնագրերից չի երևում։ Հովհաննես Խմաստասերը և Մկիթըն տոմարի հայոցի... հեղինակը բացատրել են այդ երևույթը և ցույց են տվել, որ 19-ամյակի եւ և առաջ զնալու այդ տարիների փոփոխությունը կատարվել է հիմնականում երեք տարին մեկ²⁶։

Հռոմեական լուսնի 19-ամյակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերահիշյալ ցիկլային փոփոխությունը հիմնականում եղել է երեք, մասամբ՝ երկու տարին մեկ (8-րդ և 19-րդ տարիներին)։

Չորեքտասներորդի, այսինքն՝ լուսնի 19-ամյա պարբերաշրջանի մի այլ առանձնահատկության մասին պահպանվել է տեղեկություն Անդրեասի զատիկի մեկնության մեջ։ Բնագրի թե՛ ընդարձակ, թե՛ համառոտ խմբագրություններում²⁷ առկա են հետևյալ համարժեք համովածները.

Ընդարձակ խմբագրություն

«Արդ՝ քանզի տուլութիւն եկեղեցւոյ
այսպէս ուսուցանէ պահել ամի ամի
զարն բաղարշակերաց, և զի մերթ դիպի
Դժ-աներորդն ի մարտի, այսինքն՝ ի մե-
հեկանի, և մերթ յապրիլի, այսինքն՝ յա-
րեգ ամսեան...»։

Համառոտ խմբագրություն

«Արդ՝ զի եկեղեցի ուսուցանէ պա-
հել զարն բաղարշակերաց եւ եղի մերթ
դիպի շորեքտասն լուսինն ի մարտի,
այսինքն է մեհեկանի, եւ մերթ յապրիլ որ
է արեգ...»։

* Ա-ն մարտն է, իսկ թիվը՝ օրը։

²⁶ «Հովհաննես Խմաստասերի մատենագրությունը», էջ 268—269, «Մկիթըն տոմարի հայոց...» (ՄՄ, ձեռ. № 1999, էջ 14ա-բ)։

²⁷ Է. Աղ ա յ ա ն, Անդրեաս Բյուզանդացու երկուհարյուրամյա տոնացույցը..., էջ 138, Ա շ. Ա բ ա հ ա մ յ ա ն, Անդրեասի տոմարագիտական աշխատությունները, էջ 80, ՄՄ, ձեռ. № 1999, էջ 18ա—20ա։

Մեկ այլ համանման հատված պահպանվել է բնագրի համառոտ խմբագրության մեջ, որից անկասկած օգտվել է Հովհաննես Սարկավազը²⁸:

Վերոհիշյալ բնագրերից հետեում է, որ լուսնի 19-ամյա և 95-ամյա պարբերաշրջաններում (19×5), ինչպես 200-ամյակի յուրաքանչյուր տարում Քրիստոսի շարժարանաց օրը, այն է՝ լուսնի լրման օրը, երեք տարվա (մասամբ երկու տարվա) հաճախականությամբ, մե՛րթ հանդիպում է մարտին, մե՛րթ ապրիլին կամ մե՛րթ դյուստրոսին, մե՛րթ քսանթիկոսին (ըստ հունական սոմարի) կամ մե՛րթ մեհեկանին, մե՛րթ արեգին (ըստ հայկական տոմարի): Եթե հուլյան և հունական տոմարական համակարգերի համար վերոհիշյալ ամիսների ցիկլային կրկնությունը ցանկացած ժամանակահատվածի համար ճիշտ է, որովհետև անշարժ տոմարներ էին և հունականը հուլյանի տեղական տարբերակն էր, ապա հայկական շարժական տոմարի համար ամիսների և լուսնի լրման օրը, երեք (մասամբ երկու) տարվա ցիկլային կրկնությամբ: 95-ամյակի և հատկապես 200-ամյակի համար ճիշտ չէ, որովհետև լուսնի լրումը, եթե 353—383 թթ. հանդիպել է մե՛րթ մեհեկանին, մե՛րթ արեգին, ապա 384—552 թթ. լուսնի լրումը եղել է մե՛րթ արեգին, մե՛րթ ահեկանին, մե՛րթ մարերին:

Հայկական մեհեկան և արեգ ամսանունների ընդմիջարկությունը, ինչպես կտեսնենք, առաջացել է նրանից, որ թարգմանությունը կատարվել է արեգին, և բնագրին միջամտողը նկատի չի ունեցել, որ լուսնի լրումը (200-ամյակի հետագա տարիներին հայկական շարժական տոմարի լուսնի մեկ օրով էտ ընկնելու և լուսնի 19-ամյա պարբերաշրջանի օրինաչափությունների համաձայն) անհրաժեշտաբար պետք է կատարվեր նաև ահեկանին և մարերին: Բերենք 384—448 թթ. համար մեր կազմած աղյուսակը (աղ. II):

Աղյուսակ II

Ներկա թվական	Փարնանային գիշերահավասարի օրը՝ մարտի 20-ը հայկական ամսով և ամսաթվով	Լուսնի 19-ամյակի			Ձատիկը	
		Վերջ նշան	Լրման օրը		հուլյան ամիսներով և օրերով	հայկական ամիսներով և օրերով
			հուլյան ամիսներով և օրերով	հայկական ամիսներով և օրերով		
1	2	3	4	5	6	7
384	արեգի 1	13	M 22	արեգի 3	M 24	արեգի 5
385	— . — 1	14	A 10	— . — 22	A 13	— . — 25
386	— . — 1	15	M 30	— . — 11	A 5	— . — 17
387	— . — 1	16	A 18	— . — 30	A 25	ահեկանի 7
388	— . — 2	17	A 7	— . — 20	A 9	արեգի 22
389	— . — 2	18	M 27	— . — 9	A 1	— . — 14
390	— . — 2	19	A 15	— . — 28	A 21	ահեկանի 4
391	— . — 2	1	A 4	— . — 17	A 6	արեգի 19
392	— . — 3	2	M 24	— . — 7	A 28	— . — 11
393	— . — 3	3	A 12	— . — 26	A 17	ահեկանի 1
394	— . — 3	4	A 1	— . — 15	A2 (A 6)	արեգի 16
						(— . — 23)
395	— . — 3	5	M 21	— . — 4	M 25	— . — 8
396	— . — 4	6	A 9	— . — 24	A 13	— . — 28
397	— . — 4	7	M 29	— . — 13	A 5	— . — 20
398	— . — 4	8	A 17	ահեկանի 2	A 18 (A 25)	ահեկանի 3
						(— . — 10)
399	— . — 4	9	A6 (5)	արեգի 21 (20)	A 10	արեգի 25
400	— . — 5	10	M 25	— . — 10	A 1	— . — 17
401	— . — 5	11	A 13	— . — 29	A 14 (A 21)	— . — 30
						(ահեկանի 7)

²⁸ ՄՄ, ձև. № 1999, էջ 18ա—բ, «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», էջ 281:

1	2	3	4	5	6	7
402	— 5	12	A 2	— 18	A 6	— 22
403	— 5	13	M 22	— 7	A 29	— 14
404	— 6	14	A 10	— 27	A 17	անհայտ 4
405	— 6	15	M 30	— 16	A 2	արեգի 9
406	— 6	16	A 18	անհայտ 5	A 22	անհայտ 9
407	— 6	17	A 7	արեգի 24	A 14	— 1
408	— 7	18	M 27	— 14	M 29	արեգի 16
409	— 7	19	A 15	անհայտ 3	A 18	անհայտ 6
410	— 7	1	A 4	արեգի 22	A 10	արեգի 28
411	— 7	2	M 24	— 11	M 26	— 13
412	— 8	3	A 12	անհայտ 1	A 14	անհայտ 3
413	— 8	4	A 1	արեգի 20	A 6	արեգի 25
414	— 8	5	M 21	— 9	M 22	— 10
					(M 29)	(— 17)
415	— 8	6	A 9	— 28	A 11	— 30
416	— 9	7	M 29	— 18	A 2	— 22
417	— 9	8	A 27	անհայտ 7	A 22	անհայտ 12
418	— 9	9	A 6 (5)	արեգի 26 (25)	A 7 (A 14)	արեգի 27
						(անհայտ 4)
419	— 9	10	M 25	— 14	M 30	— 19
420	— 10	11	A 13	անհայտ 4	A 18	— 9
421	— 10	12	A 2	արեգի 23	A3 (A 10)	արեգի 24
						(անհայտ 11)
422	— 10	13	M 22	— 12	M 26	— 16
423	— 10	14	A 10	անհայտ 1	A 15	— 6
424	— 11	16	M 30	արեգի 21	A 6	արեգի 28
425	— 11	16	A 18	անհայտ 10	A 19	անհայտ 11
					(A 26)	(— 18)
426	— 11	17	A 7	արեգի 29	A 11	անհայտ 3
427	— 11	18	M 27	— 18	A 3	արեգի 25
428	— 12	19	A 15	անհայտ 8	A 22	անհայտ 15
429	— 12	1	A 4	արեգի 27	A 7	արեգի 30
430	— 12	2	M 24	— 16	M 30	— 22
431	— 12	3	A 12	անհայտ 5	A 19	անհայտ 12
432	— 13	4	A 1	արեգի 25	A 3	արեգի 27
433	— 13	5	M 21	— 14	M 26	— 19
434	— 13	6	A 9	անհայտ 3	A 15	անհայտ 9
435	— 13	7	M 29	արեգի 22	M 31	արեգի 24
436	— 14	8	A 17	անհայտ 12	A 19	անհայտ 14
437	— 14	9	A 6 (5)	— 1	A 11 (10)	— 6
				(արեգի 30)		(— 5)
438	— 14	10	M 25	արեգի 19	M 27	արեգի 21
439	— 14	11	A 13	անհայտ 8	A 16	անհայտ 11
440	— 15	12	A 2	արեգի 28	A 7	— 3
441	— 15	13	M 22	— 17	M 23	արեգի 18
442	— 15	14	A 10	անհայտ 6	A 12	անհայտ 8
443	— 15	15	M 30	արեգի 25	A 4	արեգի 30
444	— 16	16	A 18	անհայտ 15	A 23	անհայտ 20
445	— 16	17	A 7	— 4	A 8 (A 15)	— 5
						(— 12)
446	— 16	18	M 27	արեգի 23	M 31	արեգի 27
447	— 16	19	A 15	անհայտ 12	A 20	անհայտ 17
448 ²⁹	— 17	1	A 4	— 2	A 11	— 9

29 Հուլյան տոմարով հիշատակված ամսաթվերը լուսնի լրման և զատկի որերի համար վերցրել ենք լուսնի 19-ամյա պարբերաշրջանից և Վ. Գրյունելի ժամանակագրության գլխավոր աղյուսակից: Ա 5-ը դարձրել ենք A 6, ըստ հայկական 19-ամյակի, միաժամանակ տալով փակագծերում A 5-ը: 394, 398, 401, 414, 421, 425, 441 և 445 թվերին ծոպատիկներ են եղել, որի համար փակագծերում նշել ենք հաջորդ կիրակիի ամսաթվերը: Մանավանդ դրա համար հիմք են տալիս Անդրեասի, Շիրակացու և Իմաստասերի համարժեք վկայությունները, որոնք ասվում է՝ երբ լուսնի լրումը ձևում է շաբաթ և կիրակի օրերին, զատիկը տեղափոխվում է հաջորդ կիրակի օրը:

թիւնն ի հասարակաւորութեանն էր, և ի Դ յաւելեացն (= մարտի 20) է միշտ: Ըս. միշտ. աստ մտանէ նիսան ամիսն առաջին, զոր արեգ ամիս կոչեցինն:

Անկասկած Շիրակացին առաջին հերթին նկատի ունի Անգրեհասի բնագրի թարգմանին, երբ նիսան ամսանունը թարգմանել են իբրև հայկական արեգ ամիս: Այս վկայութիւնը հիմք է տվել Անգրեհասի՝ վերոհիշյալ հատվածում արեգ ամսի համարմանը (փակագծում) գնել նիսան ամսանունը: Ընդ որում, ինչպես երևում է վերոհիշյալ բնագրերից, առաջին ամիսը հիմնականում սկսվում էր զարնանային գիշերահավասարից հետո: Անգրեհասի բնագրում նիսանի առաջին օրվա մասին կա հուլյան տոմարի զուգահեռ նշում: Անանիա Շիրակացու աշխատություններից³⁶ հայտնի են դառնում, որ երբայական նիսանի 1-ը համարվեց է հուլյան տոմարի մարտի 22-ին, ինչպես և մյուս ժողովուրդների տոմարական համակարգերի համապատասխան ամսաթվերին, որոնց վկայակոչելը անհրաժեշտ չէ: Հովհաննես Սարկավազի կազմած «եռանդախորան» աշխատության մեջ հռոմեական մարտի 22-ը համարվեց է երբայական նիսանի 1-ին, իսկ ապրիլի 4-ը՝ նիսանի 14-ին³⁷: Այնտեղ կարելի է գտնել դրանց համարմանները նաև այլ ժողովուրդների տոմարական համակարգերում: Հովհաննես Սարկավազն ունի նաև հետևյալ արժեքավոր վկայութիւնները³⁸.

1. «Ի մարտի ամսոյ ԻԲ-ն (22) նիսան ամսոյ մուտ է»:

2. «Ի մարտի ԻԲ (22) տարէմուտ է երբայեցոց, արաբացոց, մակեդոնացոց»:

3. «Պարձեալ գնոյն պարզաբար առցաք ասել: Յառաջին աւուր ըստ նիսան ամսոյ, և ի ԻԲ (22) երից աղգացոյ ամսոց, դիւտորոսի ըստ յունաց և ըստ ասորոց՝ յաղար. իսկ ըստ Հռոմի ի մարտի ամսոյ (յ) ասեն զսկիզբն հասարակաւորին զարնանայնոյն և ի ԻԳ-ն (26) պնմենովթալ ըստ եգիպացոց»:

ՄՄ 1114 թվահամարի ձեռագրում գրված է. «Մարտի ԻԲ Մուտ է նիսանայն»³⁹:

Վերոհիշյալ տոմարական զուգահեռները կասկած չեն հարուցում, որ նիսանի 1-ը համարվեց է մարտի 22-ին: Հասկանալի է, որ Անգրեհասի բնագրում տարվա սկիզբը, այսինքն՝ նիսանի 1-ը, որ արձանագրվել է հուլյան տոմարով մարտի 19-ը, գրչական սխալ է: Այն պետք է ուղղել մարտի 22: Այդ երևում է նաև Անգրեհասի բնագրի լուսնի 19-ամյակի «նահանջեալ» ամսի (13-րդ լուսնի) մասին հիշատակությունից, որտեղ այն ավելացվում էր տարվա վերջին՝ մարտի 19-ին, արեգակի սկզբնական կետից շարժվելու, եռյի համաստեղությունը մտնելուց առաջ: Մարտի 19-ի հիշատակությունը լավագույն դեպքում կարելի է ընդունել զարնանային գիշերահավասարի օրվա փաստագրում, սակայն այդ ևս, ինչպես տեսանք, բնագրով չի հաստատվում: Հայտնի է, որ Անատոլիոս Լաոդիկեցին է մարտի 19-ը ընդունել զարնանային օրահավասարի օր (ըստ Օվսերիոս Կեսարացու և Հովհաննես Սարկավազի համարման տվյալների)⁴⁰, իսկ նիսանի 1-ը՝ մարտի 22:

Այլ խոսքով, զարնանային գիշերահավասարի օրը (տարբեր ժամանակներում և հեղինակների կողմից) ընդունվել է մարտի 19-ը, 20-ը, 21-ը և 22-ը: Միայն վերջին դեպքում է, որ զարնանային գիշերահավասարի օրը համարվեց է եղել առաջին ամսվա սկզբի հետ, այն է՝ նիսանի 1-ի: Այս տոմարական հասկացություններն ու հարցերը քննելուց հետո դառնանք Անգրեհասի տոնացույցի թարգմանության ժամանակի խնդրին:

Անգրեհասի բնագրի հայերեն թարգմանության մեջ ասվում է, որ Քրիստոսը առաջին ամսի 14-րդ օրը շարժարվեց զարնանային գիշերահավասարից հետո՝ նիսան ամսին: Այնուհետև թարգմանիչը շարունակում է. «և այս ոչ վրիպեալ է ի մէջ, թեև այժմ ի մեր ամս և աւուրս յարեգ ամիս են»:

Վերոհիշյալ հատվածը ցույց է տալիս, որ թարգմանության տարում զարնանային գիշերահավասարը (= մարտի 20) և Քրիստոսի շարժարանքի օրը, այն է՝ առաջին լուսնի լրման օրը, այսինքն՝ լուսնի 19-ամյա պարբերաշրջանի առաջին տարին (= նիսանի 14 = ապրիլի 4) եղել են հայկական արեգ ամսին: Հետևաբար դժվար չէ գտնել, թե արեգ ամսին միաժամանակ զարնանային օրահավասարը և Քրիստոսի շարժարանքի օրը՝ ավագ լուսնի լրման օրը, այսինքն՝ լուսնի 19-ամյակի առաջին տարին, որ թվականներին են համընկել: Քանի որ Անգրեհասի

³⁶ «Անանիա Շիրակացու մատենագրությունը», էջ 290, 315—317:

³⁷ «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», էջ 164—165, 167:

³⁸ Նույն տեղում, էջ 213, 215, 240, 266:

³⁹ ՄՄ, ձեռ. № 1114, էջ 25ր:

⁴⁰ «Օվսերիոս Կեսարացու Պատմութիւն եկեղեցւոյն, Վենետիկ, 1877, էջ 600—603, «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», էջ 241:

200-ամյա տոնացույցը, ինչպես տեսանք, սկսվել է 353-ին և ավարտվել 552 թրիստոնեական դիսեմբերյան թվականին, ուստի պարզ է դառնում (տե՛ս աղյուսակ II), որ զարնանային գիշերահավասարի օրը և լուսնի 19-ամյակի առաջին տարիները միաժամանակ արեգ ամսին համընկել են 391 թ., 410 թ., 429 թ. և 448 թ. (մասամբ): Բերված թվերից առաջինը և վերջինը (391 թ. և 448 թ.) թարգմանության տարի լինել լեն կարող մի դեպքում՝ հայերեն գրերը տակավին հայտնի չլինելու, մյուս դեպքում՝ Քրիստոսի շարժարանաց օրը, այն է առաջին լուսնի լրման օրը ահեկանի 2-ին լինելու պատճառով: Մենք են 410 և 429 թվերը, որոնցից մեկն էլ եղել է Անգրեասի տոմարի թարգմանության տարին: 410 թվին, ինչպես երևում է II աղյուսակից, զարնանային գիշերահավասար եղել է արեգի 7-ին (=մարտի 20), լուսնի 19-ամյակի առաջին տարին՝ արեգի 22-ին (= ապրիլի 4), զատիկը՝ արեգի 28-ին (= ապրիլի 10): 429 թվին զարնանային, գիշերահավասարի օրը եղել է արեգի 12-ին (=մարտի 20), լուսնի 19-ամյակի առաջին տարին՝ արեգի 27 (=ապրիլի 4), զատիկը՝ արեգի 30-ին (=ապրիլի 7-ին): Պարզ է, որ Անգրեասի 200-ամյա տոնացույցը հայերի կողմից գործադրության մեջ է դրվել նրա առաջին տարուց՝ 353 թվից, 57 կամ 76 տարի, այսինքն՝ 3 կամ 4 19-ամյակ հետո, այն է՝ 410 կամ 429 թվից: Բերված թվականներից մեկի ընտրությունը, ինչ խոսք, կարոտ է լրացուցիչ բնութային՝ ընդհանրապես, որ Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը եկեղեցական տոները կարգավորել են գրերի գլուխից անսխալապես հետո, ապա ավելի հարմար է 410 թվականը, իսկ եթե ոչ՝ 429 թվականը:

Այսպիսով՝ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Անգրեասի 200-ամյա տոմար-տոնացույցը ասորերենից հայերեն է թարգմանվել 410 կամ 429 թվականին: Այդ աշխատությունը, որի մի մասն է միայն մեզ հասել, մաշտոցյան շրջանի եզակի թարգմանություններից մեկն է, որն ունի ստույգ թվական և նվազագույն կեսարացուցիկ եկեղեցական պատմության հետ (թարգմանված 416—419 թթ.) մրցում է առաջինը կամ երկրորդը լինելու մեջ: Այդ աշխատությունն այժմ ունի նաև բնագրի արձեղը: Միաժամանակ հերքվում է Անգրեասի 200-ամյա տոնացույցի՝ գրերի գլուխից առաջ հայերեն լեզվով օգտագործված լինելը:

КАЛЕНДАРЬ АНДРЕАСА И ВРЕМЯ ЕГО ПЕРЕВОДА НА АРМЯНСКИЙ ЯЗЫК РАФИК ВАРДАНЯН

Р е з ю м е

Армянские средневековые рукописи сохранили любопытные сведения о календаре Андреаса. Труд Андреас был переведен с сирийского на армянский язык. Из армянских первоисточников становится ясным, что календарь Андреаса был начат в 353 г. и завершен в 552 г. Его 200-летний цикл состоял из $19 \times 10 + 10$ (или $19 \times 5 + 19 \times 5 + 10$) лет—с первого года 19-летнего лунного цикла, когда полнолуние имело место 4-го апреля (14-го числа месяца нисан), по 10-ый год этого цикла, когда полнолуние наступало 25-го марта (4-го числа месяца нисан).

Переводчик отмечал, что в год перевода день весеннего равноденствия (—20-го марта) и день Страстей Христовых—день первого полнолуния первого года 19-летнего лунного цикла (=14 день месяца нисан=4-го апреля), приходились на месяц арег подвижного армянского календаря. Такое совпадение имело место в 391, 410, 429 и частично 448 гг. Анализ показывает, что 200-летний календарь Андреаса был переведен с сирийского на армянский в 410 г. или 429 г. Это один из редких переводов периода возникновения армянской переводной литературы, который имеет достоверную датировку. Вместе с тем отвергается мнение о том, что 200-летним календарем Андреаса пользовались на армянском языке до создания армянского алфавита. Он вошел в употребление среди армян через 57 или 76 лет после своего создания, т. е. в 410 или в 429 гг.